Արձանագրություն N 2
«ՏԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-2016/1ՏՀ» ծածկագրով արտակարգ կամ անկանխատեսելի իրավիճակի առաջացման հիմքով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«25» հոկտեմբերի 2016թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ք. Քաբաբյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Գասպարյանը և Ա.Պապյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Օրդուխանյան

I. Բաց ընթացակարգի հայտերի բացման մասին
(Ք. Քաբաբյան)

ա/ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1.	«Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ	-	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Հեքիմյան 8ա E-mail: artsroad@mail.ru
2.	«ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ		ք. Իջևան, Մետաղագործների 15/7 E-mail: miqnar@mail.ru
3.	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	-	Գեղարքունիքի մարզ, գ. Նորատուս E-mail: info@haldi.am

բ/ մասնակիցների կողմից առաջարկված գները պայմանագրի կատարման համար ընդհանուր գումարով հետևյալն են.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները ՀՀ դրամ			Նախահաշվային արժեքը (ՀՀ դրամ)
		Գինն առանց ԱԱՀ-ի	ԱԱՀ	Ընդհանուր	
Չափաբաժին 1					
1	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	180 000	36 000	216 000	300 000
Չափաբաժին 2					
1	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	150 000	30 000	180 000	250 000
Չափաբաժին 3					
1	«Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ	600 000	120 000	720 000	800 000
2	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	665 000	133 000	798 000	
Չափաբաժին 4					
1	«ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ*	299 200	--	299 200	400 000
2	«Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ	333 333	66 667	400 000	
3	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	240 000	48 000	288 000	
Չափաբաժին 6					
1	«Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ	250 000	50 000	300 000	300 000
2	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	180 000	36 000	216 000	
Չափաբաժին 7					
1	«ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ*	44 000	--	44 000	50 000

** Մասնակիցը չի հանդիսանում ԱԱՀ վճարող:*

գ/ «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը չեն հաստատվել էլեկտրոնային թվային ստորագրությամբ,

դ/ հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին.

ա) համապատասխանում են՝ «Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ-ի և «ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը,

բ) չի համապատասխանում՝ «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա) «Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ-ի և «ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել «Բավարար», քանի որ համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին,

բ) «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել «Անբավարար» և մերժել, քանի որ չի համապատասխանում հայտերի կազմման և ներկայացման պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա հանձնաժողովը որոշեց.

ա) առաջին տեղ զբաղեցնող ճանաչել.

- «Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ-ին՝ 3-րդ և 6-րդ չափաբաժինների համար,
- «ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ-ին՝ 4-րդ և 7-րդ չափաբաժինների համար,

բ) երկրորդ տեղ զբաղեցնող ճանաչել.

- «Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ-ին՝ 4-րդ չափաբաժնի համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

- սույն ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 35-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետի համաձայն՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին, իսկ 5-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետի համաձայն՝ ոչ մի հայտ չի ներկայացվել,

- սույն կետում նշված չափաբաժինների համար հաստատել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը,

- առաջարկել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,

- փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրվա ժամը 15:00-ին, ՀՀ ք. Երևան, Նալբանդյան 28, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն 3-րդ հարկ, N 307 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ք. Քարաբյան

Անդամներ՝ _____ Գ. Գասպարյան

_____ Ա. Պապյան

Քարտուղար՝ _____ Հ. Օրդուխանյան